

Պ-215-03.07.2019-ԱՍ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**« ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի օրենքի ՀՕ-244-Ն 7-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Նոտարները և անհատ ձեռնարկատերերը ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են սոցիալական վճարները տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ ինքնազբաղված անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք՝ տարեկան կտրվածքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Եթե գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ապա վարձու աշխատողը սոցիալական վճարը հաշվարկում և փոխանցում է ինքնուրույն՝ գործատուի համար սահմանված ժամկետներում»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Պ-215-03.07.2019-ԱՍ-011/1

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«~~ՀՕՐԵՆՔԸ~~ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «~~ՀՕՐԵՆՔԸ~~ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի օրենքի ՀՕ-244-Ն ~~այսուհետ՝ օրենքի~~ 7-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր ~~թվականությամբ~~ խմբագրությամբ.

«4. Նոտարները և անհատ ձեռնարկատերերը ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են սոցիալական վճարները տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ ինքնազբաղված անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք՝ տարեկան կտրվածքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Եթե գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ապա վարձու աշխատողը սոցիալական վճարը հաշվարկում և փոխանցում է ինքնուրույն՝ գործատուի համար սահմանված ժամկետներում»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գևորգ Պապոյան	«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքում փոփոխություն կատարելուց մասին օրենքի նախագիծ (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0)	Նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով:	Ընդունվեց	Ընդունվեց
2.	Հեղինակ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գևորգ Պապոյան	«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքում փոփոխություն կատարելուց մասին օրենքի նախագիծ (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածում «ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի» բառերը փոխարինել «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ եւ 18-րդ հոդվածի 3-րդ մասերը	Ընդունվեց	Ընդունվեց
3.	Հեղինակ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գևորգ Պապոյան	«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքում փոփոխություն կատարելուց մասին օրենքի նախագիծ (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածում <<բովանդակությամբ>> բառը փոխարինել <<խմբագրությամբ>> բառով:	Ընդունվեց	Ընդունվեց
4.	<< կառավարություն	«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքում փոփոխություն կատարելուց մասին օրենքի նախագիծ (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0)	Նախագծի 1-ին հոդվածում <<որպես ինքնագրաված անձինք>> բառերից հետո լրացնել <<տարեկան կտրվածքով>> բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ << հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման մասով սահմանված է երկու ժամկետ՝ տարեկան եկամտային հարկի դեպքում՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ և ամսական եկամտային հարկ վճարելու դեպքում՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:	Ընդունվեց	Ընդունվեց